ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

Ի պատասխան Ձեր 01.11.2023թ. հ.014 գրության՝ տեղեկացվում է, որ Արաբկիր վարչական շրջանի Բաղրամյան պողոտա հ.37 և հ.39 հասցեում կառուցապատող «Վալենսիա» ՍՊԸ-ին բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման համար Երևանի քաղաքապետարանի կողմից դեռևս 12.03.2008թ. տրվել է հ.02/18-2792-183 շինարարության թույլտվությունը, որով շինարարական աշխատանքների կատարման համար ժամկետ է սահմանվել 2 տարի 10 ամիս:

Միաժամանակ տեղեկացվում է, որ նշված հասցեում նշված շինարարության թույլտվության շրջանակներում իրականացված է փոսորակի փորման աշխատանքներ և ներկայումս շինարարական աշխատանքներ չեն իրականացվում:

Տեղեկացվում է նաև, որ դիմումով նշված տարածքը հանդիսանում է մասնավոր սեփականություն և վերջինիս մաքրման աշխատանքների իրականացումը դուրս է Երևանի քաղաքապետարանի «ԵԱՍՄ» համայնքային հիմնարկի գործառույթների շրջանակից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ